№ 24 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 18 ՅՈՒՆԻՍԻ 1894 34 №

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում գրւում են միմիայն, խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մենք համոզմունք չունենք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ռաշտի ազգային ուսումնարանները. Նամակ Համադանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Քաղուածներ արտասահմանեան լրագրներից.—Յայտարարութիւններ.—Բորսա:

ՄԵՆՔ ՀԱՄՈԶՄՈՒՆՔ ՉՈՒՆԻՆՔ

Ամեն կողմից մեզ դիմում են հարցնելով թէ ինչ է անում Սովետների համար կազմուած Յանձնաժողովը, որ բաղկացած էր տեղական հաստատութիւնների կողմից երկերկու անդամներից, որոնք պէտք է միահամուռ ջանքերով աշխատէին Թէհրանի հայերի աննշան լուման հասցնել կարօտեալներին: Մենք դժբաղդաբար պարտաւորւած ենք պատասխանելու, որ դեռ չը կազմուած, նա կազմալուծուեցաւ: Յանձնաժողովը երեք տետրակ շինեց. յանձնեց երեք հոգու, սպասելով որ մարդիկ ելնեն իրանց ոտքով դան և ըստորագրեն այդ տետրակների մէջ. դժբաղդաբար ոչ ոք տեղից չը շարժուեցաւ. այս եղաւ Յանձնաժողովի բոլոր գործունէութեան սկիզբը և վախճանը, և այժմ նա հանգստանում է իւր դափնիների վերայ!!!

Մենք ցաւելով նկատում ենք, այս խնդրի մէջ ևս, մի երևոյթ որ վաղուց մեր ուշադրութիւնն էր գրաւել, այն է, որ եթէ մեր մէջ երբ և իցէ լինում են ջանքեր յօգուտ ազգայի ն հաստատութեանց, այդ միայն այն ժամանակն է լինում երբ մի հակառակութիւն կայ երկու ընկերութեան մէջ. բայց երբ ջանք է լինում միահամուռ առանց հակառակութեան և համոզմունքով գործելու, այդ բոլոր գեղեցիկ եռանդը, որ մի հակառակութեան պարագայում, անսպառ աղբիւրներ ունէր, այժմ սպառւում է հէնց առաջին բոպէից:

Ինչու՞ չը յաջողուեցաւ այդ հանգանակութիւնը:—Որովհետև ջանք եղաւ միաբանութեամբ գործելու: Ի՞նչ է այդ բանը, որ մի խումբ մարդիկ աշխատում են ոսկեզօծել „մրցում“ բառի տակ, եթէ ոչ զուտ հակառակասիրութիւն, որը, խոստովանւում ենք, մեր մէջ մի շատ աւելի զօրեղ գործօն է քան թէ ամենավսեմ զգացումները, և ամենաբարձր սկզբունքները: Այդ երեւոյթը, շատերին աննկատելի, լաւ դիտողի համար մի լոյս է ձգում մեր բընաւորութեան դատարկութեան և փքունութեան վերայ: Այն ժամանակ մենք հասկանում ենք թէ մեր հասարակութիւնը որքան քիչ կենսունակ, առողջ ոյժեր ունի, և որչափ աւելի գտնւում է վնասակար շարժառիթների ազդեցութեան տակ:

Ոչ, պարոններ, եթէ մի գործ լաւ է, լաւ է ինքն ըստ ինքեան. պէտք է գործը ինքը ոգևորէ մեզ, ոչ թէ այն ինչ որ դուք սովոր էք անուանել մրցում: Այդ մրցումը, որ դուք մտցնում էք ձեր վարժարաններում որպէս միակ զօրեղ շարժիչ, այնքան խոր արմատներ է ձգում բնաւորութեանց մէջ, որ երբ այդ դպրոցական մանուկները դառնում են հասարակական գործիչներ, նոքա ղեկավարւում են դարձեալ միևնոյն շարժառիթից, մրցումից, այլապէս ասած հակառակութիւնից: Դուք ձեր ցանածն էք քաղում:

Երբ դուք աշակերտներին կը սովորեցնէք դպրոցի նստարանների վերայ որ պէտք է ուսանել, ուսանելու համար միայն, ոչ թէ ընկերից աւելի բարձր կանգնելու կամ աւելի տոմսակ ստանալու համար, դուք կունենաք հասարակութեան անդամներ, որոնք կը գործեն գործի համար, ոչ թէ ուրիշից դերադաս հանդիսանալու համար. և երբ կը կատարուին այդ երկուքը, այն ժամանակ միայն դուք կարող էք պարծենալ որ ունիք մտաւոր զարգացում, համոզմունք, ոչ այժմ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌԱՇՏԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԸ

Ռաշտի Հայ Հասարակութիւնն ունի երկու ուսումնարաններ՝ մէկը տղայոց համար, որը կոչւում է Ս. Թարգմանչաց ուսումնարան, և որի յաճախող աշակերտները երեսուն և ութի են հասնում և միւսը օրիորդաց համար, որը կրում է Խրիմեան օրիորդաց ուսումնարան անունը և որի յաճախող աշակերտուհիների թիւը քսան և երկուսի է հասնում. վերջինը շատ նոր հաստատութիւն է, հազիւ թէ մէկ տարուց իվեր գոյութիւն ունի, իսկ տղայոց ուսումնարանը բաւական հին է. մինչև 1886 թուականը սա միայն մի հասարակ խալիֆայան դպրոց էր կառավարուած տեղական քահանայով և տիրացուներով: Բայց 1886-ին երբ ուսումնարանը տիրացուների ձեռքից անցաւ Կովկասից բերուած ուսուցիչների ձեռքը, նա մի քայլ առաւ դէպի վերանորոգում, և կամաց կամաց Կովկասի հայ գիւղական ուսումնարանների ձևը ստացաւ: Այժմ այս ուսումնարանի ներքին կազմակերպութիւնը և դասաւանդութեան ձևերը, ի նկատի ունենալով տեղական հանգամանքները, բաւական բաւարարացուցիչ են: Պարզ բան է որ Ռաշտի նման մի քաղաք, որի մէջ գտնուած հայ բնակիչները հազիւ թէ 60 ընտանիք լինին և որոնց մեծ մասը նիւթական նախանձելի դրութեան մէջ չեն. պարզ բան է կըրկնում եմ՝ որ այսպիսի մի քաղաք չէ կարող մի բարձր ուսումնարան ունենալ և մենք տեսնում ենք որ այս ուսումնարանը շատ համեստ մէկն է այնպէս որ „գիւղական“ ածականը կարելի է տալ սորան: Ուսանողուած առարկաները այս տեղ են հայերէն, պարսկերէն, ռուսերէն, կրօնագիտութիւն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն և գեղագրութիւն, այս բոլորը մինչև մի որոշ աստի-

ճան ի հարկէ. ուսումնարանը երկու դասարանների է բաժանուած և ունի միայն մի ուսուցիչ (պարսիկ միրզան մի ժամ է պարապում օրը)։ Ընթերցողը կարող է երևակայել թէ ուսուցիչն ինչ նեղութիւններ ունի իւր հանդէպ, բայց դասարանների ծրագիրը տեսնողը կը տեսնէ որ այս անյարմարութիւնը չէ կարող միջամտել դիսցիպլինայի հետ։

Օրիորդաց ուսումնարանը մի աւելի ևս համեստ դիրք ունի, այստեղ պարսկերէնի և ռուսերէնի տեղը բռնում է, ձեռագործը որը, չը նայելով որ ուսումնարանի գոյութիւնը աւելի չէ քան մի տարի, բաւական առաջ է գնացել. միւս առարկաները միևնոյններն են որոնք աւանդւում են տղայոց ուսումնարանում։ Մեզ երևաց որ թէ ուսուցիչը և թէ ուսուցչուհին շատ տաք սրտով ըզբաղւում են դպրոցի հետ։

Ընթերցողը կարծեմ սպասում է որ մի տեղեկութիւն ևս տամ ուսումնարանների ֆինանսական դրութեան վերաբերմամբ։ Տարեկան ծախսն է մօտաւորապէս 500 թուման. դռանի անկման պատճառաւ (ուսուցիչը և ուսուցչուհին վարձուել են ռուսական փողի հաշուով) իսկ եկամուտը հետևեալ աղբիւրներից է։

Պարոն Լիանոզով 75 թուման, տարեկան նուէր. պ. Թումանեանք 50 թ. տեղական Թատերասիրաց ընկերութիւնը 22 թ. տեղական Ընթերցասիրաց ընկերութիւնը 25 թ. եկեղեցին 106 թ. ընդհանուր գումարն է 275 թ. որ սա հաստատ եկամուտն է, և 500-ի մէջ գտնուած զանազանութիւնը գոյանում է անցորդների նուէրներից, և աշակերտների տարեկան վճարից որն է 10—15 թուման առ տարին, նոցա համար, որ կարող են այդ գումարն վճարել. թէ այս դպրոցներն քանչ ապագայ ունի ն. արդեօք դատապարտուած են ներկայ դրութեան մէջ մնալ միշտ, թէ մօտիկ ապագայումն աւելի բարձր դիրք կը ստանան, չենք կարող ճիշդ գաղափար յայտնել. բայց տեղական հայերի մէջ անտեղի կուսակցական հոգու բացակայութիւնը մեզ պատճառ է տալիս յուսալ որ ուսումնարանները ընդ միշտ այս համեստ դրութեան մէջ չեն մնալ։

Մտածում եմ որ ընթերցողներիս մէջը վերոյիշեալ ուսումնարանների հոգաբարձուներից էլ կը գտնուին, արդեօք կարելի է հարցնել այս պարոններից թէ ինչու են ուսուցիչների հետ միայն մի տարով պայմանաւորւում և ամեն տարի 100 ռուբլի և աւելի ճանապարհածախս վճարում ուսուցիչներին. բացի այս նի ւթական վնասից և ուսուցիչներին յաճախ փոխելը մեծ վնաս է պատճառում երեխայոց մտաւոր և բարոյական զարգացմանը։ Հոգաբարձուները կարող են առարկել որ այժմեան ուսուցիչը երեք տարի իւր գործը շարունակում է բայց չեն մտածում որ մի և նոյն ուսուցիչը կարող էր ամեն տարի իւր հայրենիքը գնալ. կրկին պայմանաւորուէր ուսումնարանի հետ և վերադառնար ուսումնարանի ծախսով։ Մենք չենք սխալուիլ ասելով որ այժմեան ուսուցիչը հէնց այդպէս էլ արել է և իրաւունք է ունեցել այդպէս վարուելու։

Ա.

Ռաշտ 5 յունիսի 94.

ՆԱՄԱԿ ՀԱՄԱԴԱՆԻՑ

(շարունակութիւն)

Այստեղից անցայ օրիորդաց ուսումնարանը որ գտնուում է հայերի թաղում և այստեղ գտայ իրերի մի տարբեր կացութիւն։ Նախ ուսումնարանն ունի իւր սեպհական շէնքը որ շատ յարմար է և մաքուր, յետոյ ամեն բան նորա մէջ ցոյց է տալիս կանացի կարգապահ ձեռքի հետքերը. այսքոլորը ներս մտնելուց շատ լաւ տպաւորութիւն է գործում մարդու վերայ։ Ուսումնարանի սաների թիւը 104 հոգի է, 69 հոգի գիշերօթիկ աշակերտուհիներ, գրեթէ բոլորն էլ որբ աղջիկներ, որոնց ամեն ծախքը հոգում է ուսումնարանը. 20 հոգի ցերեկօթիկ աղջիկներ, և 24 հոգի տղայք (տղայոց ուսումնարանի նախակրթարանը օրիորդաց ուսումնարանումն է)։ Այս սանուհիները և սաները, բոլորն էլ հայեր են անբացառապէս։ Ուսումնարանն ունի 7 տարուայ ընթացք հաշուելով և պատրաստականը. նորա կառավարչութիւնը ղեկավարում է Եւրոպայի ամենավերջին սիստեմի երեսով. նորա լեզուների (հայերէն, անգլիերէն, և պարսկերէն) և գիտութիւնների աւանդութիւնները բոլորն էլ սկսում են առաջին տարուանից և երթալով ընդարձակւում են մինչև վերջին տարին։ Մէկ բան որ մասնաւոր ուրախութիւն պատճառեց ինձ այն էր որ ուսումնարանի լեզուն հայերէնն է, բոլոր գիտութիւններն աւանդւում են այդ լեզուով, մինչ ուսուցիչը սովորեցնում է հայերենի հետ և գիտութիւնների տէխնիկական անգլիերէն տէրմիններն էլ, բայց չեմ կարող չափսոսալ որ ուսումնարանի մէջ ընդունուած է Պօլսոյ դասագրքերը և հետևաբար Պօլսոյ բարբառը որ նոյնչափ անբնական է հնչում համադանցի օրիորդների բերանից որչափ մի օտար լեզու։ Պօլսոյ դասագրքերի մի ուրիշ վատութիւնն էլ այն է որ շինուած են հարց ու պատասխանով, և մէկ դասի որ ներկայ էի, այսինքն հայոց պատմութեան, աշակերտուհիները պատասխանում էին գրքից գոց արած նախադասութիւններով, որ դասաւանդութեան մի լաւ սիստէմ չէ մանաւանդ պատմութեան առարկայի համար։ Երկրորդ և երրորդ տարուայ դասարաններին ներկայ էի, թուաբանութեան և աշխարհագրութեան դասերին, և աշակերտուհիներին դտայ ցանկացածի չափ ուժեղ, մանաւանդ երկրորդ առարկայի մէջ, որ երրորդ տարուայ փոքրիկ աղջիկները կարող էին քննութիւն տալ տղայոց ուսումնարանի հինգերրորդ դասարանի հետ, և մրցանակը տանել առանց դժուարութեան։ Ուսումնարանի մէջ ամենից շատ աչքի ինկնող մասը մանկապարտէզն էր (պատրաստականը), այստեղ ամեն բան տնօրինուած էր մանկավարժական ամենաընդունուած օրէնքների համաձայն և ամենմի փոքրիկ բանի վերայ մասնաւոր խնամ էր տարուած։ Աշակերտուհիների երգեցողութիւնը, նոթաների վերայ և երկձայն, բաւական յաջող էր, և ես ուրախութեամբ լսեցի որ ուզում են շուտով սկսել քառաձայն երգեցողութիւն։ Այս ուսումնարանի մէջ աչքի են ինկնում մէկ երկու թերութիւններ, առաջինն այն է որ անգլիերէն լեզուին հարկաւոր եղածից պակաս նշանակութիւն է տրւում։ Մենք հայերս շատ ուրախ ենք որ մեր երեխաների սովորած պաշտօնական լեզուն իրանց մայրենի լեզուն է. բայց միևնոյն ժամանակ կուզէինք որ նոքա լաւ ողորեն անգլիերէնը իբրև մի օտար լեզու, և ինչպէս ասացի մէկ թերութիւն է երբ Ֆելթ Հըբբըրտ ուսումնարանի ուսումնաւարտ աշակերտուհիները ոչ մի տեղեկութիւն չունին անգլիերէն լեզուի քերականութիւնից. նոյնպէս չէ կարելի չը նկատել բնագիտութեան, բնական պատմութեան, բուսաբանութեան բացակայութիւնը, որոնցից գոնէ մի տարրական տեղեկութիւն անհրաժեշտ է ամեն մի կանոնաւոր ուսումնարանից ելած աշակերտի կամ աշակերտուհու համար։ Ուսումնարանը ընդհանրապէս շատ լաւ տպաւորութիւն է թողնում մարդու վերայ, ամեն բանից երևում է որ վարժուհիները նուիրուած են իրանց գործին, աշակերտուհիներն բոլորն առողջ են, և մաքուր։ Մասնաւոր տպաւորութիւն գործեց իմ վերայ տեսչուհու ասածը թէ „ես ուզում եմ որ հայ օրիորդները հայ մեծանան“ և իրօք ուսումնարանի ամբողջ կազմակերպութիւնից բուրում էին այդ բառերը։

Եւ մէկ ճշմարիտ հայի համար կը մնար միայն մէկ բան, որ նա փափագէր

տեսնել այս դպրոցի մէջ, այն է ազգային երգերը: Չը մոռանամ ասել որ ձեռագործը նոյնպէս շատ լաւ է այս ուսումնարանում: Հրապարակով յայտնելով մեր շնորհակալութիւնները բոլոր այն անձանց որ աշխատել են Պէյթ Հըրբըրթ ուսումնարանին տալ իւր ունեցած ուղղութիւնը, և յուսալով որ ամեն տեղ այն միսիոնարները, որ գործում են հայերի մէջ կը հետևեն նորա օրինակին, փակում եմ իմ խօսքը այս հաստատութեան վերաբերութեամբ որ միակ մխիթարական երևոյթն է Համադանում:

(կը շարունակուի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մի մասնաւոր նամակից քաղում ենք հետևեալ լուրը: Չենք կարող թագ կայնել մեր սրտի անհուն բերկրանք՝ տեսնելով Դավրիժու կանացի սեռին կաշկանդող շղթաները խորտակուած մի քանի յարգելի և տոկուն տիկնանց շնորհիւ, որոնք արհամարհելով ամեն տեսակ խոչնդոտ, չարշաւները գլխներին գցած, մտնում են տնէ տուն և կոպէկներ հաւաքում յօգուտ տաճկահայ իրանց սովեալ քոյրերի և եղբայրների: Այդ անում է տեղւոյս կանանց ընկերութիւնը: Առ այժմ 400 թուման է հաւաքուած:

—

Զորեքշաբթի օր տեղի ունեցաւ տեղւոյս Ամերիկական „Իրան-Բեթել" օրիորդաց դպրոցի ջրջանաւարտների հանդէսը, Աւարտել էին միայն երկու հոգի օրիորդք Կատարինէ Յովսէփեան և Եղիսաբէթ Անդրէասեան: Սա մի երևոյթ է որ սովորական է Թէհրանի բոլոր դպրոցներին, որ, այն ինչ առաջին դասարանները բաղկացած են լինում 10—20 ուսանողներից, աւարտողները լինում են միայն 2—3 հոգի: Երևի նոցա ծնողները բաւական են համարում որ իրանց երեխայքը կարողանան „սեւը սիպտակից ջոկել" և այդ պատճառով ան ժամանակ դուրս են հանում իրանց զաւակներին վարժարանից: Գանք վերոյիշեալ դպրոցին: Շրջանաւարտներից մէկի ճառի նիւթն էր „Հայրիկի կենսագրութիւնը", իսկ միւսինը „Հայ գրականութիւնը Ոսկեդարում": Նիւթերը բաւական գոհացուցիչ կերպով մշակուած էին: Հանդէսը վերջացաւ մի յորդորով տեսչուհու կողմից առ ուսումնաւարտ սանուհիները, որ շատ լաւ ազդեցութիւն թողեց, և որի մէջ տեսչուհին, օրիորդ Դէյլ, շատ համակրական հայեացքներ էր յայտնում դէպի հայերը և նոցա ապագան: Ի դէպ է ասել որ մի քանի տարիներից ի վեր այդ դպրոցում հետզհետէ երևան է գալիս յառաջադէմ ուղղութիւն: Դպրոցի պաշտօնական լեզուն որ առաջ անգլիերէն էր, այժմ հայերէն է և գրեթէ բոլոր առարկաները աւանդւում են հայերէն լեզուով: Մենք շնորհաւորում ենք այդ ուրախալի երևոյթը: Թող օրինակ առնեն Հնդկաստանի հայ դպրոցները, ուր տիրող լեզուն անգլիերէնն է, նմանապէս Նոր Ջուղայի կեդրոնական դպրոցը, ուր, ինչպէս լսում ենք, շատ առարկաներ ուսուցանւում են անգլիերէն լեզուով:

—

Յայտնի ակնաբոյժ Գալեզովսկին որ եկած էր Պարսկաստան Ն. Բ. Զէլլը Սուլթանի աչքերը բժշկելու համար, մի քանի օր առաջ Սպահանից հասաւ Թէհրան, և այժմ պատրաստւում է շուտով մեկնել դէպի Փարիզ:

—

Հայկազեան վարժարանի հոգաբարձութիւնը դիմում է մեզ յայտնելով որ Ն. Վ. Էհթէշամը-Սալթանէն բարեհաճել է 73 կտոր գիրք նուիրել Հայկազեան վարժարանի գրադարանին, և այս մասին իւր խորին շնորհակալութիւնն է յայտնում:

—

Ն. Ջուղայից մեր ստացած տեղեկութիւններից երևում է որ այնտեղ լուսաւորչական և բողոքական հայերի մէջ ընդհարումներ են տեղի ունեցել, և երկու կողմից այնքան անվայել միջոցների են դիմել որ կատարելապէս ապացուցւում է բարեկրթութեան բացակայութիւնը երկու կողմի ախոյեանների մէջ: Ե՞րբ կը հասկանան, վերջապէս, հայերը որ մարդ կարող է շատ ջերմ կերպով յարած լինել իւր դաւանութեան, առանց անարգելու միւս դաւանութիւնները: Չէ՞ թէ քրիստոնէական ոգու գլխաւոր յատկանիշը՝ ներողամտութիւնն է, և ոչ թէ հալածանքը դէպի իրան, ց քիչ կամ շատ տարբեր կրօնական գաղափար ունեցող եղբայրները: Բայց մեր մէջ ամեն բան ձևականութիւն է, այս էլ միւսների նման:

—

Երեկ, ուրբաթ, տեղի ունեցաւ Հայկազեան վարժարանի վերջին քննութիւնը. քննութիւնները սկսել էին մայիս 23-ին. բաւական հանդիսականներ կային, որոնց մէջ նաև լուսաւորութեան նախարարութիւնից և յայտնի պարսիկ անձնաւորութիւններից մի քանի հոգի: Ընդհանրապէս աշակերտները ցոյց տուին շատ գեղեցիկ յառաջադիմութիւն իրանց սովորած օտար լեզուների —պարսկերէն, ֆրանսերէն և ռուսերէն— և այլ առարկաների մէջ, և շատ գովեստների արժանացան հանդիսականների կողմից: Աշխարհագրութեան և պատմութեան քննութիւնները թէև արդէն կատարուել էին, բայց ի խնդրոյ պարսիկ հանդիսականների, նորից թեթև կերպով կրկնուեցան և լաւ տպաւորութիւն թողեցին:

—

Մեր արտասահմանի բաժանորդներից ոմանք դիմում են մեզ գանգատ յայտնելով որ „Շաւիղ" թուերը կանոնաւոր կերպով չեն ստանում: Այս գանգատների հիման վերայ մենք փոստային վարչութեան դիմեցինք, և վարչութիւնը իւր տետրակներով մեզ ցոյց տուաւ որ ոչ մի զանցառութիւն տեղի չէ ունեցել պարսկական փոստայի մէջ. խնդրում ենք մեր բաժանորդներից դիմել իրանց տեղական փոստային այս մասին:

—

Դավրիժու հայոց կրթական „Սէր" ընկերութեան վարչութիւնը շնորհակալութեամբ հրատարակութեան է տալիս գեր. Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանի յատուկ յանձնարարութեամբ և ժապաւինեալ տետրակով հանգանակուած հետևեալ նուէրները յօգուտ գաւառներ գնացող ուսուցիչների: Դավրէժից, Ս. արքեպիսկոպոս Պարզեանից և եղբարք Թումանեաններից 20-ական դուան. ոմըն, Զ. Նազարբէկ., Եղբ. Միքայելեաններ, Զ. Բուդաղեան, Զ.Մ. Գրիգորեան, Երեմ. Յովհաննէսեան, Եղբ. Աֆթանդիլեաններ, և „Ար. ընկ". 10-ական դ., Բ. Մ. Սարգսեան 8, Ն. Գորոյեան 7, և Թ. Աֆթանդիլեան 6 դ., Ա. Տ. Օհանեան, Տէրունեան, Եղբ. Բժշկեաններ, Գնտապետեան, Տ. Խէնչ., Հ. Նազարբէկ., Ազ Մ.Անան., Ստ. Մ. Ղազ., Եղբ. Տ.Գրիգոր., Ար. Ալ., Խ. Յակովբ, Մ. Յակովբեան, Ոմն, Ոմն. Ոմըն. Յ. Մ. Ազար. Ոմն. և Գ. Հաարամթ., 5-ական դ., Ս. Սագին., Բ. Ջան., Ս. Տ. Օհան., Մ. Պետ., Ոմն., Մ. Յովսէփ., և Ոմն. 4-ական դ., Ոմն. 3.50կ. Նիկ., Վ. Իչէն, Մ. Մամ., Մ.Ցակ., Ա. Տ. Մարտ., Ս. Մ. Աբր., և Ա. Թամիր., 3-ական դ., Ս.-ից, Ոմն., Ռ. Մ. Գեր. Ոմն, Ոմն. Գ. Բէջ., Ս. Պետ., Ն. Մ. Բաբաջ., Յ. Աղաս., Ալէքսան, Ոմն, Ա. Տ. Օհան., Կ. Բաղչ., Ս. Կոստ., Յ. Տ. Յովսէփ., Ոմն., Ոմն., Ներսէս, Գ. Աւաք., Ոմն., Մովս., Б. Куб., Գ. Ալահ., Ա. Բաղդ., Յ. Միրզ., Յ. Բժիշկ., Ղարախանեան, Ղ. Յով., Ս. Մովս., Գ. Մ. Պետ., Ղ. Յովս., Ա. Խանբուդաղ., Մ. Աւետ., Եղիա, Եղ. Գ., Յ. Կարապ., Վ. Առ., Խ. Մ. Սարգ., Յ. Տ. Յակ., Ոմն., Ոմն., Մ., Գուլզադ., Բ. Մէհրաբ., Գ. Տ. Յակ., Յ. Տ. Զաքար., Ոմն., Խ. Շահբուդ., Ա. Մ. Աստուր., և Ս. Սահակ., 2-ական դ., Ս. Մ. Աբր., 1 50 կ., Ա., Աւ., Ոմն., Ա. Ջոհրաբ., Ամիրխան., Մուշի., Յ. Բժիշկ., Դ. Ցաբ., Յ Շահնազ., Ա. Խաչ., Զ. Վարդ., Վ. Գրիգոր., Ե. Ղազար.,

Ոմն., Ոմն., Յ. Քարամ., Խ. Բաղդ., Ս. Առաք., Դ. Բժիշկ., Յ. Յովհան., Ոմն., Պ, Մ. Պետ., և Ոմն. 1-ական ղուան, ընդ ամենը անում է 409 ղուան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐՆՕՅԻ ՍՊԱՆՈՒՄԸ

—

Հեռագիրը բերեց մի տխուր լուր Ֆրանսիայից. Նախագահ Կարնօն սպանուած է մի իտալացու ձեռքով հետեւեալ պարագաներում:

Նախագահ Կարնօն գնացած է լինում Լիօն, ուր տեղի ունէր մի գաղթականական արուեստահանդէս, իւր ներկայութեամբ պատուելու համար: Անցեալ շաբաթ գիշերը յունիս 11 տեղի է ունենում մի շքեղ ներկայացում Լիօնի մեծ թատրոնում ի պատիւ Նախագահի և երբ թատրոնի դռնում, նախագահը իջնում է կառքից, մի իտալացի առաջ գալով ամբոխի միջից քաշում է իւր դաշոյնը, և կրծքից վիրաւորում է նորան: Նախագահին տեղափոխում են տուն, ուր նա իւր վերջին շունչը փչում է կէս գիշերից 35 րոպէ անցած: Իտալացին կոչւում է Սանտօ, և համարւում է մի վտանգաւոր անիշխանական, բայց մինչև այժմ դեռ ոչինչ յայտնի չէ սպանութեան շարժառիթների մասին: Ոճրագործը անմիջապէս ձերբակալւում է, և ժողովուրդը պատրաստւում էր նորան կտոր կտոր անել. բայց ոստիկանութիւնը պաշտպանում և բանտարկում է նորան: Նախագահի մարմինը տեղափոխուած է Փարիզ, ուր, առաջիկայ կիրակի, տեղի կունենայ հանդիսաւոր թաղում Նոտր-Դամ եկեղեցու մէջ, և մարմինը կամփոփուի Պանթէոնի մէջ, ուր, ինչպէս յայտնի է, թաղւում են միայն հայրենիքին մեծ ծառայութիւն մատուցանողներին: Կարնօն ծնուած էր 1837 թուականին, ուրեմն 57 տարեկան էր: Նա նախագահ ընտրուեց 1887-ին, եօթնամեայ ժամանակով, և հազիւ մի քանի ամիս մնացել էր ժամանակի լրման: Ընդհանուր կարծիքն այն էր որ նա կը վերընտրուէր, այնքան օրինակելի կերպով վարել էր իւր պաշտօնը: Նորա ուղղամտութիւնը և անպայման ազնւութիւնը ամենքին յայտնի էր: Նա և իւր կինը, տիկին Կարնօ, այս եօթը տարուայ ընթացքում մեծ ժողովրդականութիւն շահեցին ոչ միայն այն արժանաւոր կերպով որով վարում էին իւրեանց վիճակուած բարձր պաշտօնը, այլ մանաւանդ, այն համակրութեան և գթութեան համար, որ ցոյց էին տալիս դէպի աղքատ դասակարգը, որին մեծ բարերարութիւն էր անում տիկինը: Կարնօն պատկանում էր չափաւոր հանրապետականների խմբին, և իւր ընտրութեամբ նա վերջ տուաւ մի սարսափելի կուսակցութեան, որ սպառնում էր ծանր հետեւանքներ ունենալ: Մէկ խօսքով Ֆրանսիան նորա մահուամբ մեծ կորուստ է անում:

Մի ցաւալի բան էլ այն է որ Ֆրանսիայի մի քանի հարաւային քաղաքներում, ուր իտալական ազգաբնակութիւնը բաւական ստուար է Գրենոբլում, Մարսէյլում և Տուլօնում ընդհարումներ են տեղի ունեցել Ֆրանսիացիների և իտալիացիների մէջ. առաջինները կամենալով իրանց նախագահի վրէժը հանել իտալիացիներից: Յուսալի է կառավարութիւնը վերջ կը դնէ այս անտեղի խառնակութիւններին:

Կարնօյի տեղ ընտրուել է յայտնի պետական անձնաւորութիւն Կազիմիր-Պէրիէն՝ 50—60 քուէի առաւելութեամբ, 800 քուէարկողների մէջ: Նա էլ պատկանում է չափաւոր հանրապետականների խմբին:

Քաղուածներ նորատասոմանեան լրագիրներից

—

Թիւրքաց կառավարութիւնը բարեհաճել է թոյլ տալ, որ մինչև յուլիս ամիսը Պարսկաստանից և Ռուսաստանից ցորեն ներմուծուի Թիւրքաց Հայաստանի գաւառները առանց մաքսի:

Կարսում բացուել է ձրի ճաշարան՝ գաղթականների և սովեալների համար: Ահա մի քանի տեղեկութիւններ այդ մասին, որ մեզ գրում են Կարսից. „ամսիս 15-ին բացուեց այստեղի ձրի ճաշարանը: Ջրի ճաշարանից օգտւում են մօտաւորապէս 500 մարդ: Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովում որոշուեց, որ ճաշարանում օրապահութիւն անեն ընկերութեան անդամները, այնպէս որ մշտական երկու օրապահ են լինում ճաշարանում: Ճաշարանից օգտըւում են, առանց կրօնի խտրութեան, բոլոր հայերը, թէ տեղական կարօտեալներից, թէ գաղթականներից":

Աշտարակի առաջնորդ Տ. Ստեփաննոս եպիսկոպոսի մահէն յետոյ Ս. Էջմիածնէն Պօղիկէժ դրկուեցաւ, իբր առաջնորդական տեղապահ, Տ. Խաչատուր վ. Կարապետեան, Պարսկա-Հնդկաստանի պատգամաւորը: Այս ալ իւր պաշտօնատեղին հասնելուն պէս վախճանեցաւ: Անմիջապէս կնքուեցաւ անոր գոյքը ի ներկայութեան երկու Թաղին հոգաբարձուներուն, քահանաներու և քանի մը անձնաւորութեանց, և հաղորդուեցաւ Սինոդին: Վերջերս ի ներկայութեան առաջնորդին և նախկին վկաներուն—բացի երկու քահանայէ որ վախճանած են—կնգուկները բացուեցան և գոյքերը ցուցակագրուեցան: Մօտաւորապէս 9,000 րուբլի արժողութեամբ հարստութիւն ելաւ: Ռուսական ոսկի. Հնդկաստանի, Բիրմանիոյ, Սիամի ոսկիներ և ռուփիներ, Հոլանդական ոսկիներ, Պարսկական Էշրէֆի կոչուած ոսկիներ, արծաթ ստակներ, թղթադրամներ, պանքայի չէքեր, տեսակ տեսակ թանկագին քարեղէններ և լաւ զգեստի, վեղարի կերպասներ ու գուլպաներ կըկազմէին այդ հարստութիւնը: Հետաքրքրական էր տեսնել թէ վարդապետը ինչ խնամքով այդ բոլոր դրամները առանձին առանձին փաթթած էր կապոցներու մէջ: Ինչպէս կերևի հանգուցեալ Խաչատուր վարդապետը Հնդկաստանի կողմերը նուիրակ եղած ատեն հաւաքեր է այդ բոլոր գոյքերը: Ամեն ինչ մանրամասն ցուցակագրուեցաւ և որոշուեցաւ սպասել հայրապետական տնօրինութեան:

Արտօնատէր-Հրատարակիչ՝ Անդրէաս Բէկնազարեանց:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ազգային Ուսումնասիրաց ընկերութեան գործադիր ժողովը պատիւ ունի յայտնել ընկերութեան անդամակիցներին եւ բոլոր հասարակութեան որ կիրակի յունիս 19 երեկոյեան երեք ժամ մնացած տեղի կունենան Հայկազեան վարժարանի աշակերտների եւ աշակերտուհիների վկայականների բաշխումը: Որին խնդրում է ներկայ գտնուիլ:

Ամեն տեսակ եւրոպական ճարեր կը գտնուին բժիշկ ԲԱԶԻԼԻ դեղատնումը Լալէզար փողոցում Թէհրանում. տան թումանաչափ եւ աւելի գնովի համար, սովորական արժէքից զիջում կը լինի: Գիշեր ժամանակում եւս դեղատունը բաց է: